

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (83)

2019 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.03.2019

Հանձնված է տպագրության

15.04.2019

---

С О Ю З Ю Р И С Т О В Р А  
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (83)  
2019 г.

Главный редактор:  
академик НАН РА,  
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 24.03.2019  
Подписано к печати 15.04.2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### *Սահմանադրական իրավունք*

Անահիտ Մանայան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԻՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵԿՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇՆԻՔ..... 5

Рита Арустамян

ПРОБЛЕМА ГАРМОНИИ ВЗАИМООТНОШЕНИЙ ЛИЧНОСТИ, ОБЩЕСТВА И ГОСУДАРСТВА..... 11

Մուշեղ Բաբայան

ՄԱՍՆԱԿՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՈՆՄԵՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ ..... 18

Հայկ Կեսոյան

ՊԱՌԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԴԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԶԵՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ..... 28

### *Պետության և իրավունքի տեսություն*

Taron Simonyan

THE EVOLUTION OF THE PRINCIPLE OF SELF-DETERMINATION AND THE ICJ ADVISORY OPINION ON THE DECLARATION OF INDEPENDENCE OF KOSOVO.. 35

### *Քրեական իրավունք և դատավարություն*

Արսեն Մարտիրոսյան

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ (ՔՐԵԱԿԱՆՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ) ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՐՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ..... 44

Միսակ Մարկոսյան

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 51

Արտակ Ղազարյան

ՄԱՍՆԱԿՈՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄՈՐԵԼՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ..... 65

### *Քաղաքացիական իրավունք և դատավարություն*

Հասմիկ Ենգոյան, Րաֆֆի Նալչաջյան

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆԵՆԴԻՐՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՈՐՏՈՒՄ..... 75

|   |    |
|---|----|
| Սիրո Ամիրխանյան   |    |
| ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ<br>ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ .....                     | 82 |
| Անի Մուրաֆյան   |    |
| ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԵՂԾ ԵՎ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ<br>ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... | 90 |

*Միջազգային իրավունք*

|  |    |
|--|----|
| Эдгар Мейроян  |    |
| ДОКТРИНА АБСОЛЮТНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО СУВЕРЕНИТЕТА В ПРАВЕ<br>ТРАНСГРАНИЧНЫХ ВОДНЫХ РЕСУРСОВ ..... | 97 |

*Իրավաբանական գրագրություն*

|  |     |
|--|-----|
| Յուրի Ավետիսյան, Արսեն Մկրտչյան, Լիանա Սարգսյան                                |     |
| ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼԵՋՈՒՆ. ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՈՐՈՇ<br>ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... | 104 |

# ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼԵԶՈՒՆ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ<sup>1</sup>

## Յուրի Ավետիսյան

*ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ,  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

## Արսեն Մկրտչյան

*ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ,  
ՀՀ դատական ծառայության 1-ին դասի բարձրագույն խորհրդակալ*

## Լիանա Սարգսյան

*ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ,  
բանասիրական գիտությունների թեկնածու*

**Մուտք:** Հանրությանը հասցեագրված խոսքի շարահյուսական կառույցը, լինի օրենք, հրաման, որոշում, սահմանադրության հոդված և այլին<sup>2</sup>, պիտի ձևակերպված լինի ոչ միայն ճշգրիտ, այլև պարզ, հստակ ու հասկանալի<sup>2</sup>: Հետևաբար եթե խոսքի բնույթը և բովանդակությունը չեն պարտադրում շարահյուսական բարդ կառույցներ, ապա խոսքի մատչելիության տեսակետից միանգամայն նախընտրելի են պարզերը: Նույնիսկ սկզբնապես մտքում ձևակերպված կամ թղթին հանձնված բարդ ձևակերպումները հեշտությամբ կարելի է փոխարինել մատչելի տարբերակներով, և խոսքը կլինի ավելի պարզ ու հասկանալի:

Հայտնի է, որ իրավական փաստաթղթերում հաճախակի գործածություն ունեն բարդ բառերը: Հաճախադեպ են 6-8-վանկանի համադրական բարդությունները (*դատափորձաքննություն, դատաշինարարատեխնիկական, սահմանադրականություն, իրավահասարակարգային, իրավահարաբերություն և այլն*) և բայական հարադրությունները (*գործ հարուցել, արձանագրություն կազմել, անվավեր ճանաչել, որոշում կայացնել* և այլն): Սրանով պայմանավորված՝ իրավական փաստաթղթերում քիչ չեն, այսպես ասած, երկարաշունչ բառերը: Հետևաբար դյուրըմբռնելի շարահյուսական համար շարահյուսական փոքր միավորի՝ բառակապակցության ընտրությունն անգամ կարող է որոշակի նախապայման լինել: Բացի այդ, խոսքի հասցեագրումը առավել դյուրին է, եթե նախադասության անդամները ունեն ճիշտ շարահասություն, խախտված չեն դրանց բնորոշ քերականական կապերը, բառակապակցական միավորները չեն ընդմիջվում տվյալ մտքին երկրորդաբար առնչվող այլ միավորներով:

**Բառակապակցություններ:** Պաշտոնական խոսքում հաճախ են գործածվում բառերի կայուն կապակցություններ և խոսքային կաղապարներ, ինչպես՝ *գործ հարուցել, վարույթ ընդունել, ուժի մեջ մտնել, պայմանագիրը լուծել, արգելանք դնել, վնասի հատուցում, հակընդդեմ հայցադիմում, պատասխանող կողմ և այլն*:

Մի շարք կառույցներ ունեն տարբերակներ՝ *ի շահ հայցվորի/հայցվորի օգտին, ի հաստատումն փորձաքննության/փորձաքննությունը հաստատելով, ի բավարարումն բողոք-դիմումի/բողոք-դիմումը բավարարելով* և այլն: Սրանցից առաջինները

<sup>1</sup> Հոդվածի համար հիմնական փաստական նյութ են եղել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերը, ծանուցագրերը:

<sup>2</sup> Պաշտոնական ոճի շարահյուսական բնորոշ հատկանիշների մասին տե՛ս Աբրահամյան Ս., Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պրակ 1-2, էջ 71-84, Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2003, Ավետիսյան Յու., Պաշտոնական ոճ, Եր., 2011:

գրական-գրքային բնույթ ունեն, ձևավորում են պաշտոնական վերամբարձ ոճ, իսկ կենդանի խոսքին առավել մոտ են երկրորդները: Հետևաբար դատական ակտերում, գրություններում վերամբարձ, նաև մատչելի ոճ ապահովելու համար նախընտրելի է դրանց **փոխնիփոխ գործածությունը**:

**Ենթակայի և ստորոգյալի գործածության յուրահատկություններ:** Հայերենում ենթակայի արտահայտության միջոցները բազմազան են. այն կարող է արտահայտվել ամենատարբեր խոսքի մասերով՝ գոյական, ածական, թվական, դերանուն<sup>3</sup> և այլն: Սակայն շարադրանքի նպատակը հստակ ձևակերպելու, խոսքի ճշգրտությունն ու պարզությունը ապահովելու տեսակետից փաստաթղթերում առավել մեծ կարևորություն են ստանում այլ գործոններ՝ ենթակայի, այսինքն՝ գործողությունը կատարողի ճիշտ և տրամաբանական ընտրությունը, նախադասության մեջ զբաղեցրած նրա դիրքը, նախադասության այլ անդամների հետ ունեցած նրա կապակցական հնարավորությունները և այլն: Այս գործոնները ճիշտ և նպատակային իրացնելու համար պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

**ա) Նախադասությունը կառուցել այնպես, որ քերականական և տրամաբանական ենթակաները համընկնեն:**

*...ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նշված կետի չկատարումը դարձել է վեճի առարկա:*

Գործողության բուն կատարողը՝ տրամաբանական ենթական (սուբյեկտը), **ՍՊԸ**-ն է, մինչդեռ նախադասության կառույցում **չկատարում**-ը գոյականն է դարձել ենթակա: Այսպիսի կառույցները նպատակահարմար չեն. կամա-ակամա քողարկվում, հետին պլան է մղվում բուն սուբյեկտը՝ գործողություն կատարողը: Օրինակում կա նաև բառակազմական անձշտություն. **չկատարում**-ը ճիշտ կազմություն չէ: **Հնմտ.**

*ՍՊԸ-ն պայմանագրի նշված կետը չի կատարել, որը դարձել է վեճի առարկա:*

Կամ՝ *Ըստ հայցվորի՝ ընկերության աշխատակցի կողմից կատարվել է վթարված ավտոմեքենայի արժեքի ոչ պատշաճ գնահատում* նախադասության մեջ տրամաբանորեն գործողություն կատարողը **աշխատակից**-ն է: Մինչդեռ կրավորական նախադասությունը անհարկի ձգձգում է ասելիքը, թուլացնում հստակությունը: Առավել նպատակային է հետևյալը՝

*Ըստ հայցվորի՝ ընկերության աշխատակիցը պատշաճ չի գնահատել վթարված ավտոմեքենայի արժեքը:*

**բ) Պահպանել ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:**

Հիշենք, որ հոգնակի թվով դրված ենթական կամ բազմակի ենթակաները պահանջում են հոգնակի թվով ստորոգյալ<sup>4</sup>: Օրինակ՝

*Դրանով հաստատվում է (⇒ են) գործում առկա հակասությունը և անձշտությունը:*

*...առանձին ակտի ձևով դատարանի կողմից կայացված որոշմամբ պետք է նշվի (⇒ նշվեն) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը...*

Փաստաթղթերից հնարավոր է դառնում եզրակացնել, որ համաձայնության սխալների զգալի մասը ունի շատ որոշակի պատճառներ. կամ ենթական ու ստորոգյալն են շատ հեռացած իրարից, կամ ընտրված է նախադասության ոչ ճիշտ

<sup>3</sup> Այս մասին տե՛ս Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 95-99:

<sup>4</sup> Անշուշտ կան այնպիսի կառույցներ, որոնցում ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը բխում է քերականական յուրահատկությունից, ինչպես՝ *Երկու տուժող հայցադիմում է/են ներկայացրել; Միացյալ Նահանգները վերանայել է օրենսդրությունը* և այլն (այս մասին մանրամասն տե՛ս Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 123-128, Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 110-111): Դատական ակտերի, ծանուցագրերի լեզվին, սակայն, քերականական այսօրինակ առանձնահատկություններ բնորոշ չեն. այս ոճի կառույցների համար մեծ մասամբ բնութագրական է գլխավոր անդամների համաձայնությունը:

կառույց, կամ էլ երկուսը միաժամանակ: Օրինակ՝ *Բեռների փոխադրումը, որը պետք է իրականացնեն նշված ՍՊԸ-ն՝ ըստ կողմերի միջև եղած պայմանագրի, և նշված ժամանակին հասցեատիրոջը հասցնելը՝ ըստ նույն պայմանագրում նշված ժամկետի, պատշաճ չի կատարվել:*

Ակնհայտ է, որ բերված օրինակում գլխավոր անդամների անհամաձայնությունը հետևանք է, այսպես ասած, խոսքի «կտրտվածության», ասելիքը մեկ նախադասության մեջ «տեղավորելու» ջանքի և գործողության հիմունքը անպայման առանցքում պահելու անհարկի մտայնության: Առաջարկվող տարբերակում մտքերը առանձնացվել են նախադասություններով. այդպես խոսքը դարձել է անսխալ, առավել հստակ և դյուրընկալ: **Հմնտ.**

⇒ *Ըստ կողմերի միջև եղած պայմանագրի՝ նշված ՍՊԸ-ն պետք է իրականացնեն բեռների փոխադրումը և սահմանված ժամկետում դրանք հանձնեն հասցեատիրոջը: Սակայն ՍՊԸ-ն պատշաճ չի կատարել իր պարտավորությունները:*

**գ) Ստորոգյալը հայերենում արտահայտվում է խոնարհված բայով, անուն խոսքի մաս+հանգույց կամ խոնարհված բայ+անորոշ դերբայ կառույցներով:** Ինչպես՝ *Դատարանը հաստատում է որոշումը: Որոշումը ճիշտ է: Ամուսինը ուզում է բողոքարկել վճիռը:*

Առաջին երկուսը չունեն գործածության դժվարություններ: Երրորդի դեպքում (խոնարհված բայ+անորոշ դերբայ) ծագում են կազմության որոշ դժվարություններ: Խոսակցական լեզվում շատ տարածված է ստորոգյալի երկու բաղադրիչները խոնարհելը, ինչպես՝ **ուզում է բողոքի, կարողանում եմ անել, պատրաստվում ես գնա**: Անկախ տարածվածությունից՝ սրանք կանոնավոր կազմություններ չեն, գրական լեզվում տեղ չունեն:

**Ճիշտ են** անորոշ դերբայով ձևերը՝ *կարողանում եմ անել, ուզում է բողոքել, պատրաստվում ես գնալու:*

Այլ օրինակներ՝

*....որպեսզի անձը կարողանա վարկ ստանա և վերադարձնի իր պարտքը....*

⇒ *....որպեսզի անձը կարողանա վարկ ստանալ և վերադարձնել իր պարտքը....*

*....ինքը ուզել է գումարը վճարի....*

⇒ *....ինքը ուզել է գումարը վճարել:*

**Շարադասություն:** Տեքստում նախադասության անդամների դասավորության որոշակի կարգն է: Դա պայմանավորում է տեքստի ճիշտ ընկալումը: Դրանից կատարված շեղումը արդարացվում է, եթե **նպատակ կա** ուշադրությունը բևեռելու այս կամ այն բառի, այս կամ այն մտքի վրա:

Պաշտոնական խոսքում շարադասության դերը ավելի կարևոր է դառնում. այն ձեռք է բերում առանցքային նշանակություն: Դա պայմանավորված է պաշտոնական խոսքի հատկանիշներով:

**Նախ**՝ այդ խոսքը կոնկրետ է և ճշգրիտ: Խոսքի ճշգրտությունը երբեմն ապահովվում է տրամաբանական շեշտով: Խնդիրը շարադասությամբ լուծելիս կարևոր նշանակություն է ձեռք բերում օժանդակ բայի/հանգույցի դիրքը, որը սովորաբար լինում է տրամաբանական շեշտ կրող անդամից հետո:

Երեք բառ ունեցող նախադասությունը կարելի է վերաձևակերպել մի քանի տարբերակով՝ պայմանավորված խոսքի նպատակադրումով, ինչպես՝

1. Վարորդը հանդիպել է տուժողին:

2. Վարորդը տուժողին հանդիպել է:

3. Վարորդն է տուժողին հանդիպել:

4. Վարորդը տուժողին է հանդիպել:

**Առաջինը** արտահայտում է չեզոք վերաբերմունք. խոսքի բնականոն ընթացք է: **Երկրորդը** շեշտում է գործողությունը կատարելու՝ *հանդիպելու* գաղափարը: **Երրորդը** շեշտադրում է ենթական՝ գործողություն *կատարողին*: **Չորրորդը** ուշադրության է առնում գործողության առարկային՝ *տուժողին* հանդիպելու հանգամանքը:

**Ապա՝** պաշտոնական խոսքը գերազանցապես իրացվում է գրավոր տարբերա-

կով և զուրկ է բանավոր խոսքին հատուկ արտասանական մեծ հնարավորություններից: Եվ եթե հաշվի առնենք նաև այն, որ իրավական փաստաթղթերում վերաբերմունք արտահայտող բառերն ունեն սահմանափակ կիրառություն, ապա ակնհայտ է, որ այս դեպքում խոսքը կառուցելու հիմնական գործիք է դառնում շարահատությունը:

Այս ամենը նշանակում է, որ իրավական փաստաթղթերում շարահատական նորմից կատարված ցանկացած շեղում պետք է լինի խիստ նպատակային ու պատճառաբանված: Հակառակ դեպքում շարահատական յուրաքանչյուր փոփոխություն կամ շրջում խաթարելու է ճիշտ կառույցը, խանգարելու է միտքը արագ ընկալելուն, հանգեցնելու է տարընթերցումների: Դրանից խուսափելու համար պետք է.

**ա) Ըստ հնարավորության ենթական շատ չհեռացնել, «չկտրել» ստորոգյալից:**

Նախադասության իմաստը ճիշտ և միանշանակ ըմբռնելու համար անհրաժեշտ է պահպանել նախադասության անդամների ընդունված դասավորությունը: Իհարկե, հայերենի շարահատությունը համեմատաբար ազատ է, սակայն շարահատական աննշան փոփոխությունն անգամ հաճախ ազդում է նյութը մատուցելու և ընկալելու վրա: Միտքը դժվար է հասկացվում, եթե նախադասության **ենթական ու ստորոգյալը ընդմիջվում են ծավալուն անդամներով**՝ միջանկյալ նախադասություններով, դարձվածքներով և այլն: Ուստի անհրաժեշտ է ենթական և ստորոգյալը նախադասության մեջ հնարավորինս «իրար մոտ պահել»: Լրացումները կարելի է «տեղակայել» նախադասության սկզբում կամ վերջում և կամ արտահայտել առանձին նախադասություններով: Օրինակ՝

*Բողոքաբերի պնդմամբ՝ Դատարանը, հաշվի չառնելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը, համաձայն որի՝ օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է կրկնակի փորձաքննության արդյունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, անհիմն նշել է, որ փորձագետի եզրակացությունը ապացույցի տեսակ է, որով հաստատվում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար վեճը ենթակա չէ դատարանում քննության:*

Գործ ունենք բազմաբարդ նախադասության հետ: Առաջին գլխավոր նախադասության ենթական ու ստորոգյալը (*Դատարանը նշել է*) հեռացել են միմյանցից. դրանց միջև հայտնվել է ծավալուն դերբայական դարձված (*հաշվի չառնելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից...»*): Հայերենի բարդ կառույցներից է. ստիպված ես մի քանի անգամ կարդալ՝ մտքերը միմյանցից զատելու և հասկանալու համար: Անհաջող կառույց է. կան նաև կապակցական անձշտություններ: Նույն միտքը կարելի է ձևակերպել ավելի կարճ:

Հնարավոր է վերաշարադրել մի քանի տարբերակով.

➤ Առանձնացնել նախադասությունները, դերբայական դարձվածները վերածել դիմավոր նախադասությունների:

*Բողոքաբերի պնդմամբ՝ Դատարանը հաշվի չի առել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը, որը հնարավորություն է սահմանում դատական կարգով բողոքարկելու կրկնակի փորձաքննության արդյունքները: Դատարանը անհիմն նշել է, որ փորձագետի եզրակացությունը ապացույցի տեսակ է, որով հաստատվում են այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, որը հիմնավորում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև վեճը լուծելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Հետևաբար վեճը դատարանում քննության ենթակա չէ:*

➤ Մտքի սահուն ընթացքը չխաթարելու համար կարելի է օրենքի դրույթները տալ փակագծերում.



Բողոքաբերի պնդմամբ՝ **Պատարանը հաշվի չի առել** կրկնակի փորձաքննության արդյունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը («Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը): **Պատարանի համոզմամբ՝** վեճը չպետք է քննվի դատարանում, քանի որ փորձագետի եզրակացությունը ապացույցի տեսակ է, որով հաստատվում է այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, որը հիմնավորում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Հետևաբար վեճը դատարանում քննության ենթակա չէ:

Գլխավոր անդամների անհարկի հեռացման այլ օրինակներ, հմմտ.՝

**Բողոքաբերը, գտնվելով երկրից դուրս, չարձագանքելով իր շահերը դատարանում ներկայացնող անձի զանգերին, այդպես էլ չի պատասխանել հարցին, թե...**

⇒ **Գտնվելով երկրից դուրս, չարձագանքելով իր շահերը դատարանում ներկայացնող անձի զանգերին՝ բողոքաբերը չի պատասխանել հարցին, թե...**

Պատարանը հրավիրված փորձագետների միջոցով չի պարզել՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել:

⇒ Հրավիրված փորձագետների միջոցով դատարանը չի պարզել, թե ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով:

Քննարկված կառույցները բնորոշ են ոչ միայն իրավական փաստաթղթերին, կամ միայն փաստաթուղթը կազմողի «մեղքն» ու խնդիրը չեն: Այսպիսի լեզվամշակույթը անցանկալի ժառանգություն է խորհրդային շրջանի պաշտոնական լեզվից: Հայաստանը անկախությունից առաջ անմիջական կախում ուներ ԽՍՀՄ-ից և նրա իրավական համակարգից: Ժամանակի պաշտոնական գրագրությունը լայն առումով ոչ միայն թելադրում էր ձևային ու բովանդակային կանոններ, այլև էպպես ազդում էր փաստաթղթերի լեզվական որակի վրա: Հատկապես իրավաբանական գրագրության մեջ շատ էին շարահյուսական օտարաբան կառույցները, ռուսերենից պատճենված կաղապարները, դերբայական դարձվածներով և կրավորական կառույցներով «խճողված» բարդ նախադասությունները: Այս առումով ուշագրավ է լեզվաբան Ս. Աբրահամյանի դիտարկումը. «Մասնավորապես Սովետական Միության ժողովուրդների լեզուների պաշտոնական ոճը ենթարկվում է միատեսակ բառապաշարի, միատեսակ շարահյուսական կառույցների: Դրան մեծ չափով նպաստում է այն հանգամանքը, որ պաշտոնական խոսքը հայերենում և ազգային այլ լեզուներում գերազանցապես թարգմանական բնույթ ունի (սահմանադրություն, կանոնադրություններ, միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթեր, ՍՍԿԿ Կենտկոմի, սովետական կառավարության որոշումներ, պաշտոնական այլ փաստաթղթեր և այլն) կամ ազգային լեզվով արտահայտվում է ռուսաց լեզվով գրված պաշտոնական խոսքի ընդօրինակումով, նմանությամբ»<sup>1</sup>:

Ներկայումս պաշտոնական խոսքը որոշ չափով հաղթահարել է ռուսերենի (նաև անգլերենի) լեզվամտածողությունը: Իրավաբանական խոսքի մշակույթը լեզվական նորոգումների զգալի ճանապարհ է անցել. փոխվել են պաշտոնական գրագրությունների ոչ միայն կառուցվածքը, չափանիշները, այլև լեզուն: Զգալի աշխատանք է կատարվում այն օտար ազդեցություններից ազատելու համար: Սակայն **ավանդույթի ուժը** հզոր է. այն դժվար է հաղթահարվում նաև լեզվի ոլորտում: Հետևաբար քննարկվող կառույցները որքան էլ անցանկալի, այսուհանդերձ սպասելի են:

**բ) Նախադասության առանցքային բառը կամ բառակապակցությունը պահել ուշադրության կենտրոնում:** Օրինակ՝

<sup>1</sup> Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 83-84:

...փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ **դիմումին** պետական տուրքը վճարելու մասին ապացույցը կցված չէ:

**Դիմումին** բառաձևը նախադասության հանգման խնդիրն է, և տրամաբանորեն անհանդիչ է դրա դիրքը: Ավելին, եթե կարիք կա բառն առանձնացնելու, ընդգծելու, պետք է դրվի ստորոգյալի կողքին, մինչդեռ անհարկի հեռացել է դրանից:

**Ճիշտ է՝ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է, որ պետական տուրքը վճարելու մասին ապացույցը կցված չէ դիմումին:**

Կամ՝ *Այսպես, նախևառաջ, ի տարբերություն պարտատերերի պահանջների, որոնց բավարարման համար անհրաժեշտ է հատուկ ընթացակարգ, անգամ հնարավոր է, որ պարտատիրոջ պահանջը չհաստատվի կամ չբավարարվի, կառավարչի վարձատրության համար հատուկ ընթացակարգ չի պահանջվում:*

...կառավարչի վարձատրության համար... այսպես կոչված, բուն նախադասությունն է. դրա բաղադրիչները տրամաբանորեն պետք է լինեին կողք կողքի, իսկ ...ի տարբերություն պարտատերերի պահանջների կապակցությունը հակառակ հիմունքն է՝ ներհակական կառույց՝ իր ծավալուն լրացումներով, որը հակադրվում է բուն նախադասությանը: Վերջինս ընդմիջվել է միջանկյալ կառույցով: Բացի այդ՝ **նախևառաջ ի տարբերություն**-ն արդեն շեղում է ընթացքից: Առաջարկվող տարբերակ.

*Կառավարչի վարձատրության համար հատուկ ընթացակարգ չի պահանջվում՝ ի տարբերություն պարտատերերի պահանջների, որոնք բավարարելու համար անհրաժեշտ է հատուկ ընթացակարգ, անգամ հնարավոր է, որ պարտատիրոջ պահանջը չհաստատվի կամ չբավարարվի:*

Կամ՝ *Բողոք բերած անձի և գործին մասնակցող անձանց՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նիստին չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:*

Առավել հարմար և սահուն տարբերակ է՝

**ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նիստին բողոքաբերի և գործին մասնակցող անձանց չներկայանալը արգելք չէ բողոքի քննության համար:**

Միշտ էլ կարելի է գտնել նախադասության անդամների այնպիսի դասավորություն, որը բոլորի համար կլինի սովորական, պարզ և ճիշտ: Միայն թե պետք է հիշել, որ բառընտրությունը կամ անգամ բառաձևի ընտրությունը զգալիորեն կարող է ազդել նախադասության կառուցվածքի, ասելիքը դյուրին կամ դժվար արտահայտելու վրա: Օրինակ՝

*Դատարանը հրավիրված փորձագետների միջոցով չի պարզել՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել:*

Խոսքաշարում առանցքային միտքը ավտոմեքենայի վնասված լինելն է, վնասի չափը (ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել), ոչ թե պատճառը (ճանապարհատրանսպորտային պատահարը): Ստորև տրված շարադասական տարբերակով շեշտվում է հենց այդ գաղափարը: **Հմնտ.**

⇒ *Հրավիրված փորձագետների միջոցով դատարանը չի պարզել, թե ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով:*

Շրջուն շարադասությունը պաշտոնական ոճին բնորոշ հատկանիշ է: Դա սովորաբար ավելի պաշտոնական, հանդիսավոր և ազդեցիկ է դարձնում խոսքը: Այս ոճում առհասարակ հաճախադեպ են ծավալուն որոշիչները (վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ պահանջ, պարզաբանման ենթակա կատարողական թերթ, դռնբաց դատական նիստ, պատահարից առաջ ընդունված նորմեր), հեռացված հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները (տուժողի՝ ավտոմեքենայի վնասը փոխատուցելու պահանջը, Դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 5-ի որոշումը): Դրանց նպատակային և տեղին շրջումը ճշգրտում, զորացնում է միքտը, ընդգծում է խոսքի բովանդակային այս կամ այն կողմը: Օրինակ՝

**Տարբերակ 1.** Պատասխանող կողմը ներկայացրել է պահանջ՝ վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ:

**Տարբերակ 2.** Պատասխանող կողմը վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ պահանջ է ներկայացրել:

Առաջին տարբերակում ուշադրությունը բևեռվում է պահանջ-ի վրա, շեշտվում է ընդհանրապես պահանջ ներկայացնելու գաղափարը, իսկ երկրորդում առաջնային ու կարևոր է դառնում պահանջի բուն բովանդակային կողմը, հատկապես այն, թե կոնկրետ ինչի վերաբերյալ է պահանջը:

Երկու տարբերակներն էլ հավասարապես ճիշտ են, պահպանում են պարզ, հստակ, նաև պաշտոնական խոսքին հատուկ որակները:

Վարչական խոսքում շրջուն շարադասությամբ կառույցները գործածվում են ավանդաբար: Որպես կանոն, փաստաթղթերի վերնագրերը որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ շրջուն կապակցություններ են, ինչպես՝

*ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*հայերենի բարձրագույն խորհրդի 2018 թ. փետրվարի 10-ի N 1 նիստի կամ՝*

*ՈՐՈՇՈՒՄ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ*

Որպես վերնագրեր՝ այս կառույցները պատճառաբանված են. փաստաթղթի անվանումը միանգամից ուշադրություն է գրավում: Խոսքային միջավայրում, սակայն, շրջուն շարադասության գործառույթը փոխվում է:

**Շարադրանքում պետք է խուսափել որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունների բաղադրիչների անհարկի հեռացումից, դրանց չպատճառաբանված շրջումից:**

Անհարկի շրջումները խանգարում են ասելիքն արագ ընկալելուն: Օրինակ՝ *Համաձայն Ձեր՝ 2016 թ. նոյեմբերի 30-ի դիմումի՝ աշխատանքից ազատվելու մասին, Ղուք 2016 թվականի դեկտեմբերի 1-ից ազատվել եք Ձեր զբաղեցրած պաշտոնից:*

Մի կողմից՝ *դիմում* բառը հեռացել է իր հատկացուցիչից՝ *Ձեր*-ից. ընդմիջվել է ծավալուն որոշիչով, մյուս կողմից՝ *դիմում* բառի մյուս՝ *աշխատանքից ազատվելու մասին* որոշիչն էլ հանդես է եկել շրջուն շարադասությամբ: Հատկապես վերջինը, դիրքով պայմանավորված, այնքան էլ չի կապվում իր որոշյալին: (*Ղուք*-ն էլ ավելորդ է): Առավել հարմար տարբերակ է՝

*Աշխատանքից ազատվելու մասին 30.09.2016 թ. Ձեր դիմումի համաձայն՝ 01.12. 2016 թ. ազատվել եք Ձեր զբաղեցրած պաշտոնից:*

Սեկ այլ օրինակ: *Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն ծառայում Ղատարանին վերագրված խախտումների առկայությունն արձանագրելու՝ բողոք բերած անձի նպատակին, ուստի վերաքննիչ բողոքը բավարարվել չի կարող:*

Անհարթ կառույց է: Առաջին ընթերցումով թվում է՝ փաստարկները դատարանին չեն բավարարում, ուստի նպատակին-ը սրա համատեքստում ավելորդ է թվում: Մինչդեռ դրանք չեն ծառայում բողոքաբերի նպատակին: Հնարավոր լուծման տարբերակները մի քանիսն են. կարելի է՝

➤ **Միայն շարադասությունը փոխել՝ հավելելով 1-2 բառ.**

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն ծառայում բողոքաբերի նպատակին, այն է՝ արձանագրել Ղատարանին վերագրված խախտումների առկայությունը, ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:*

➤ **Գործածել բացահայտիչ-բացահայտյալ կառույց.**

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն ծառայում բողոքաբերի նպատակին՝ Ղատարանին վերագրված խախտումների առկայությունը արձանագրելուն, ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:*

➤ **Նախադասությունը ենթարկել կառուցվածքային որոշ փոփոխության:** Այս տարբերակը նախընտրելի է. հնարավորություն է տալիս ազատվելու ավելորդ բա-

ռերից: Ի դեպ, այս նախադասությամբ ձևակերպվում է դատական ակտի եզրափակիչ միտքը, հետևաբար այն պետք է լինի որոշակի ու հստակ:

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն հիմնավորում այն խախտումները, որոնք բողոքաբերը վերագրում է Ղատարանին, ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:*

Պետք է խուսափել նախադասության «միջուկը» առանցքային բառը, նախադասության վերջում դնելուց: Կառույցն այսպիսին է.

*Այդպիսի փաստը կարող է հավաստվել միայն << ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից տրված տեղեկանքով:*

Նախ՝ ցանկալի չէ **հավաստվել** բառի գործածությունը, ապա՝ **տեղեկանքով** բառածը պետք է դնել խոսքը սաստկացնող **միայն** բառից հետո: Դերբայական դարձվածն ավելի է դժվարացնում անհրաժեշտ բառի որոնումը: Նշվածներից խուսափելու համար կարելի է կատարել շարադասական աննշան փոփոխություն: **Հմնտ.**

⇒ *Այդպիսի փաստը կարող է հավաստի դառնալ միայն տեղեկանքով՝ տրված << ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից:*

Կամ՝ *Այդպիսի փաստը կարող է հավաստի դառնալ միայն տեղեկանքով, որը տրվել է (տայիս է) << ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից (գործակալությունը):*

Եթե վերը բերված օրինակներում սխալ շարադասությունը ընդամենը դժվարացնում է արագ ընկալումը, ապա լինում են դեպքեր, երբ այն հանգեցնում է արտառոց մտքերի «հայտնության», ինչպես՝

*Իրավասու մարմին առանց փաստաթղթերի բերման ենթարկված Սահմանադրական դատարանի անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո:*

Այս շարադասությամբ՝ ընդգծված բառակապակցությունը լրացնում է ոչ թե անդամը բառին, ինչպես ենթադրվում է շարադրանքից, այլ **Սահմանադրական դատարանի-ն**. ունենում ենք բերման ենթարկված Սահմանադրական դատարան: Հնարավոր է շտկելու հետևյալ տարբերակով.

*ա) Սահմանադրական դատարանի իրավասու մարմին առանց փաստաթղթերի բերման ենթարկված անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո:*

*բ) Սահմանադրական դատարանի անդամը, որը առանց փաստաթղթերի բերման է ենթարկվել իրավասու մարմին, պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո:*

Մի այլ դեպքում անձիշտ շարադասությունը ազդում է գործողությունների տրամաբանական հաջորդականության վրա, ինչպես՝

*Անձը պետք է դատարանին ապացուցի ու վկայակոչի հիմնավոր փաստեր ժամկետը բաց թողնելու պատճառների մասին:*

Այս նախադասությունը կարելի է ավելի պարզ վերաշարադրել: **Հմնտ.**

⇒ *Անձը ժամկետը բաց թողնելու պատճառների մասին պետք է հիմնավոր փաստեր վկայակոչի դատարանին և ապացուցի դրանք:*

**Ամփոփում:** Ենթակայի և ստորոգյալի հարաբերության, կապակցելիության հարցերում հեշտ է կողմնորոշվել. ուշադիր լինելու դեպքում վրիպելը գրեթե բացառվում է: Մինչդեռ շարադասական խախտման յուրաքանչյուր դեպք կարող է դառնալ առանձին քննարկման առարկա: Բացի այդ, հայերենի շարադասությունը համեմատաբար ազատ է, և գրողն ինքն է ընտրում իր ասելիքին հարմար նախադասության անդամների դասավորություն, հետևաբար ամեն դեպքի համար չկա սահմանված կանոն: Սակայն եթե հիմք ընդունենք միայն շարադասության ազատությունը և անտեսենք լեզվի ներքին օրինաչափությունները, ապա կունենանք անձշտություններ (դրանք վերը քննարկեցինք): Լեզվագործածության բարձր մակարդակ ապահովելու համար լեզվագագացողության և լեզվական գիտելիքի ներդաշնակ համադրումը անհրաժեշտ է:

## LANGUAGE OF LEGAL DOCUMENTS. SYNTAX SOME FEATURES

**Yuri Avetisyan**

*Head of the YSU Chair of Armenian Language  
Doctor of Philology (Armenian), Professor*

**Arsen Mkrtchyan**

*The Chairman of the Civil Court of Appeal of the RA  
Senior Counselor of 1st degree Judicial Service of the RA*

**Liana Sargsyan**

*Candidate of Philology (Armenian)  
Associate of Professor*

The article examines the features syntax of legal documentation, grammatical and logical subjects such as matches, their connectivity, as well as violations of the sentence syntax members. Language sentence structure is relatively free, and its tale writer chooses a suitable layout of the sentence, so there is no set rule for every case. But if we take only syntax freedom and ignore the internal laws of language, we will inaccuracies.

## ЯЗЫК ЮРИДИЧЕСКИХ ДОКУМЕНТОВ: НЕКОТОРЫЕ СИНТАКСИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ

**Юрий Аветисян**

*Заведующий кафедрой армянского языка ЕГУ,  
доктор филологических наук, профессор*

**Арсен Мкртчян**

*Председатель Гражданского Апелляционного Суда РА,  
Высший советник 1-го класса судебной службы РА*

**Лиана Саркисян**

*Доцент кафедры армянского языка ЕГУ,  
кандидат филологических наук*

В данной статье рассматриваются синтаксические особенности юридических документов РА, такие, как совпадение грамматического и логического подлежащих, их сочетаемость, а также нарушения порядка слов в предложении. В армянском языке порядок слов относительно свободный, и автор сам выбирает тот порядок членов предложения, который удобней ему. Поэтому нет строгих правил для каждого отдельного случая. Но если пренебречь закономерностями языка, мы столкнемся с неточностями, что особенно недопустимо в юридических документах.

**Բանալի բառեր** - ենթակայի և ստորոգյալի համաձայնություն, շարադասական փոփոխություն, կայուն շարադասություն, դերբայական դարձված, դատական ակտ, հստակություն, պարզ կառույց, վերամբարձ ոճ, պաշտոնական գրագրություն

**Key words** - subject and predicate agreement, syntactic change, sustainable word order, participial phrase, judicial act, clarity, simple structure, official writing.

**Ключевые слова** - согласование подлежащего и сказуемого, изменение порядка слов, устойчивый порядок слов, причастный/депричастный оборот, судебный акт, ясность речи, простые конструкции, официальное делопроизводство, возвышенный стиль.